

**ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ «ՆԱՎՐ ԼԵՌԱՆ ՎՐԱ» ՎԵՊԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպը երկու հրատարակություն է ունեցել՝ 1943-ին Բոստոնում և 1963-ին Երևանում: «Ի դարու հայ գրականության պատմության ամենէն աղմկայարոյց դրուագներէն մէկը կապուած է Կոստան Զարեանի *Նաւը Լեռան Վրայ* վէպի երեսնեան հրատարակութեան»,– գրում է Վ. Մատթէոսեանը<sup>1</sup>: Արդյունքում ընթերցողի սեղանին դրված են նույն վերնագրով երկու տարբեր գրքեր՝ ասելիքի նպատակի և կերպի առումով, թեև գործողությունները գրեթե նույնն են, հերոսները՝ նույնպես: Թե՛ Սփյուռքում, թե՛ Հայաստանում լույս են տեսնում բազմաթիվ հոդվածներ, որոնց հեղինակները քննադատում կամ չեն ընդունում երկրորդ գրքի ծնունդը, շատերն էլ աշխատում էին բացատրել այդ երևույթի պատճառները: Կարծում ենք՝ բոլորի մոտ էլ առաջացել է նույն հարցը. «Կամաւոր էր վէպին փոխակերպումը: Գաղափարական տարբեր դիրքերէ հրատարակուած նոյն գործը կարելի՞ էր ընդունելի նկատել: Հեղինակին գիտակցութեամբ թէ ոչ, նման աշխատանք բարոյապէս թոյլատրելի՞ էր»<sup>2</sup>:

2003 թվականին «Բագին» հանդեսում տպագրվում է Միքայել Թավրիզյանին<sup>3</sup> ուղղված Գուրգեն Մահարու նամակի<sup>4</sup> մի հատվածը՝ խմբագրական վերլուծությամբ. «Ինչո՞ւ Էդուարդ Բոյաջյանը<sup>5</sup> իր կրքոտ բաց նամակն ուղղած է խորհրդային իշխանությանը, փոխանակ գրքի խմբագրին, Հրայր Գրիգորյանին<sup>6</sup>: Ո՞ր օրվանից Հրայր Գրիգորյանը

<sup>1</sup> Հայկազեան հայագիտական հանդես, Պէյրուօ, 2006 (առանձնատիպ Ի 2 հատորէն), էջ 297:

<sup>2</sup> Ն.տ., էջ 297:

<sup>3</sup> Հայ դիրիժոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ:

<sup>4</sup> «Բագին», 2003, Բեյրուօ, հ. 3, էջ 141:

<sup>5</sup> Հայ արձակագիր, բանաստեղծ, հրապարակագիր, քննադատ, խմբագիր և ուսուցիչ:

<sup>6</sup> Հայաստանի սովետական գրողների միության վարչության առաջին քարտուղար (1938-1939, 1946), «Կոմունիստ» թերթի խմբագիր (1939-1944), «Պրավդա» թերթի ՏՍՍՍ սեփական թղթակից (1944-1946), ՏՍՍՍ Կինեմատոգրաֆիայի

դարձավ Խորհրդային իշխանություն»։ Մահարին գրում է, որ վեպի երկրորդ հրատարակությունը ընդամենը խմբագրական ձախորդ փորձի արդյունք է. «...Չլիներ Հրաչյա Գրիգորյանը և նրա փոխարեն «Նավը» լեռան վրա բարձրացնել մի ուրիշ խմբագիր, ուրիշ կլիներ պատկերը»<sup>1</sup>։ Այս նամակի օրինակով կարելի է ներկայացնել Խորհրդային հասարակայնության մտածելակերպը, չնայած ինքը՝ Գուրգեն Մահարին, շատ ավելի լավ էր հասկանում, թե ինչ է կատարվում, քանի որ իր մաշկի վրա էր զգացել Խորհրդային գրաքննության ազդեցությունը (հիշենք «Այրվող այգեստաններ» գրքի տպագրության շուրջ ծավալված կրքերը<sup>2</sup>)։

Եթե Խորհրդային գրողներն ու արվեստագետները չէին կարողանում խոստովանել կատարված փոփոխությունների իրական պատճառները, ապա սփյուռքահայ գրողներն ու գրաքննադատները չէին կարող հասկանալ, քանի որ չէին պատկերացնում, թե գաղափարական ինչպիսի ճնշման էին ենթարկվում սովետական գրողներն ու արվեստագետները։ Միգուցե այդ պատճառով է Ա. Ծառուկյանը գրում. «Ճիշդ է, որ Հրաչյայ Գրիգորեանը բարի պտուղ մը չէր, բայց վստահ եմ որ բոլոր խաթարումները գրքին մէջ եղած են Զարեանին կրատրական հաւանութեամբ եւ իր կամքով։ Գրքի մը խմբագիրը Հայաստանի մէջ պաշտօնական գրաքննիչը չէ՛, ըստ որո՛ւ անպատեհ (կամ... պատեհ) տողեր եւ էջեր կրնան մկրատիլ, այլ հեղինակին տրամադրուած խորհրդական մը, որուն հետ համաձայնաբար կրնայ սրբագրութիւններ կատարել իր գործին վրայ, միշտ վերջին խօսքը մնալով հեղինակին։ Խմբագիրը հաշտարար ատեանն է, գրաքննիչը (կլասիտ կոչուած) վերաքննիչ ատեանը, որուն վճիռները անբեկանելի են։ Այնպէս որ, ինչ որ եղած է գրքին մէջ, եղած է Զարեանի հաւանութեամբ, չըսելու համար նրա մասնակցութեամբ»<sup>3</sup>։

Ա.Ծառուկյանի զարմանքին և դժգոհությանը պատասխանում է «Բագինի»<sup>4</sup> խմբագրականը. «Մահարիի ապրած տարիներուն՝ նոյնիսկ

---

մինիստր (1946-1948), SUUS Մինիստրների սովետին կից հայ եկեղեցու գործերի կոմիտեի նախագահ (1948-1957), «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագիր (1959-1963)։

<sup>1</sup> «Բագին», 2003, Բեյրութ, հ. 3, էջ 142։

<sup>2</sup> Այդ մասին, ինչպես նաև էր. Թոփչյանի գործունեության մասին կարելի է կարդալ Գր. Աճեմյանի հոդվածում <http://www.azg.am/AM/culture/> 2011071603։

<sup>3</sup> Վ. Մատթեոսեան, Նիւթեր Կոստան Զարեանի *Նալը լեռան վրայ* վեպի երեւանեան հրատարակութեան մասին, Հայկազեան հայագիտական հանդէս, Պէյրութ, 2006, (առանձնատիպ Ի2 հատորէն), էջ 297։

<sup>4</sup> «Բագին», 2003, Բեյրութ, հ.3 էջ 142։

իր մայրը գիտեր, որ երեանեան տպարանում տպուած գիրքերը «խնդա-  
գին» ապրումներ չէին յուշեր, այլ անոնց անխուսափելիօրէն կ'ընկերանային  
տխրագին պատճառներ, վասնզի ո՛չ միայն մէկ տողին չէին դիպչեր հոն,  
այլեւ էջեր ու էջեր կ'աւելցնէին կամ կը յապաւէին խմբագիրները, որոնք  
արդէն դասակարգ դարձած էին գրաքննիչներ անունին տակ, ու եթէ  
ներկայացած բոլոր գիրքերուն վրայ չէին կրնար արգոսեան աչքերով  
հսկել, մթնոլորտային ճնշումին տակ շնչահեղձ անոնց հոգիներուն կը  
հսկէր ներքին գրաքննիչը, որ տարբեր չէր բացայայտէն»<sup>1</sup>:

1964 թվականին՝ «Նավի» երևանյան հրատարակությունից  
անմիջապես հետո, լույս է տեսնում Պողոս Սնապյանի «Աւագախրած  
նաւը» վերլուծականը: Սփյուռքահայ այս գրականագետը հսկայական  
աշխատանք է կատարել՝ բառ առ բառ, տող առ տող, էջ առ էջ  
մեջբերումներ կատարելով և համեմատելով վեպի առաջին և երկրորդ  
հրատարակությունները: Այս համեմատությունից պարզ է դառնում՝  
կրճատումներն ու փոփոխությունները այնքան շատ են, որ վեպում  
նկարագրվող ժամանակաշրջանի ամբողջական պատկերը կորչում է,  
իրականության վերարտադրումը՝ տուժում: Պ. Սնապյանը չափազանց  
խիստ է մոտեցել երկրորդ հրատարակությանը. որքան որ արժևորել է  
բոստոնյան հրատարակությունը<sup>2</sup>, նույնքան էլ քննադատել է երևանյան  
հրատարակությունը՝ Կ.Զարյանին մեղադրելով հեղինակության,  
երկերեսանիության և այլ մեղքերի համար<sup>3</sup>:

Ստեղծված վիճակը հրաշալի է բացատրում Մարկ Նշանյանը.  
«Օշական եւ Զարեան, նոյն բովին (եղեռնը, Ա.Հ.) մէջը մեծցած նոյն  
բախտը չվայելեցին (նկատի ունի Վարուժանի փառքը): Իրենց գործած  
մեղքը վերապրիլն էր Աղէտին: Թերեւս ուրիշ մանր մեղքեր ալ ունէին  
քաւելիք, որոնցմէ նազագոյնը չէր Հայաստանի աչքին՝ Սփիւռքի տա-  
րածքին բարձր գրականութիւն մշակելու ծրագիրը եւ իրողութիւնը,  
քանի որ կարենալ հասնելու համար իրենց բաղձանքին՝ ստիպած էին  
բախտորոշ ընտրութիւն մը կատարելու: Երկուքն ալ ընտրեցին, ի  
հարկէ՝ տարբեր ձեւերով, ազատութիւնը: Հայաստանը երբեք չներեց

<sup>1</sup> Ն.տ., էջ 144, 142:

<sup>2</sup> «Պատմական այդ ժամանակաշրջանի պատմական բոլոր անցողարձներուն ու  
դէպքերուն թելադրած բոլոր երեւոյթները վերլուծած, բոլոր երեւոյթներուն մասին  
իր խօսքը ըսած գիրքն է ան: «Նաւը լերան վրայ» վէպին մէջ տրուած է  
Հայաստանի բովանդակ փիլիսոփայութիւնը (Նախաբան):

<sup>3</sup> «Կ. Զարեան միայն մաքրաջրած չէ իր վէպը, այլ նաեւ մշուշագրած է գայն:  
Տեղական պայմաններուն յարմարելու իր ճիգը յաճախ դաւաճանած է իրեն ու  
ակներեւ դարձուցած է կատարուած խաղը», էջ 153:

իրենց մօտ՝ ազատ ըլլալու, գրական ասպարեզին մէջ ազատօրէն շնչելու ու շրջելու ցանկութիւնը: Ու պատժեց երկուքն ալ, Օշականի ծովածալալ գործին հանդէպ անտարբերութեամբ, եթէ ոչ թշնամութեամբ վերաբերելով, ու Ջարեանին վերապահելով աւելի ահաւոր պատիժ մը: ... Ջարեանի կեանքին վերջին տարիներուն՝ Հայաստանի պատկան մարմինները «գրկաբաց» ընդունած են զինք մայրենի հիւրընկալ հողին վրայ, առինքնելով ստապատիր խօստումներով, ու յետոյ պահած են իբրեւ պատանդ, իր գործերը խեղաթիրելով, ու իր անձը ճզմելով»<sup>1</sup>:

Ի՞նչ է ինքը՝ Կ. Ջարյանը, ասում իր գրքի երկրորդ հրատարակության վերաբերյալ: «Նավատոմարում»<sup>2</sup> նախ գգուշավոր դիտողություն է հնչում. «...Սիլվան (*Կապուտիկյանի մասին է, Ա.Հ.*), որ կարդացել է «Նավը», ասում է արտասահմանյան հրատարակությունը գլուխգործոց է, և արած փոփոխություններս երկրորդի համար փշացրել են գիրքը: Կարծում եմ նա իրավացի է»<sup>3</sup>: Հետո արդեն կարդում ենք ճշմարտությունը. «Ես ուզում եմ իմացվի, որ «Նավի» երկրորդ հրատարակությունը լույս է տեսել ճնշման, խաբեության և սպառնալիքի տակ: Երկրորդ հրատարակության վերջին մասը բոլորովին ավելորդ է, ինչպէս նաև շատ փոփոխություններ վեպի ներսում: Պրն Գրիգորյանը ստացավ ավելի քան 2000 ռուբլի արտագրելու և, առանց ինձ հարցնելու սխալ փոփոխություններ մտցնելու համար: ...Իմ գրած վեպը այն է, ինչ որ տպված է արտասահմանում (շատ աննշան փոփոխություններով) և իմ մահից հետո երբ արտատպեն, թող միանգամայն անտեսեն երկրորդ հրատարակությունը»<sup>4</sup>:

Իսկ ամեն ինչ սկսվել է նրանից, որ հայությունն ու հայրենիքը հոգում, սրտում ու արյան մեջ կրող գրողին, որը երազում էր իր երկրի լեռների մասին, համոզում են վերադառնալ Հայաստան՝ խոստանալով Հայաստանում տպագրել «Նաւը լերան վրայ» վեպը: Կ. Ջարյանը նույնիսկ պլանավորել էր գրել գրքի երկրորդ հատորը՝ նվիրված Հայաստանի շինարարությանը: Կարծում ենք՝ եթէ նախնական համաձայնությամբ Ջարյանին հնարավորություն տային վեպը աննշան փոփոխություններով (ինչպէս ինքն էր նախատեսել) տպագրել Երևանում, և գրողը ստեղծեր «Նավի» երկրորդ հատորը, որում նա նախատեսում էր պատմել խորհրդային հայրենիքի ձեռքբերումների մասին,

<sup>1</sup> Մ. Նշանյան, Կոստան Ջարեան. Անկարելի թատրոնը, Բազմավեպ, 1994, էջ 176:

<sup>2</sup> Նավատոմար, Երևան, 1999, 667 էջ:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 565:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 567:

ապա թե՛ գրականագիտական, թե՛ խորհրդային գաղափարախոսության փառասիրությունը շոյելու առումով կունենայինք հրաշալի պատմություն: Հր. Գրիգորյանը գրում է. «Մեզ համար կարևոր այս վեպում նրա հիմնական երկու դրոյթներն են՝ ա) Որ դաշնակցական տիրապետության տարիները փորձանք ու դժբախտություն էին հայ ժողովրդի համար: Այդ հիանալի կերպով ցույց է տրված վեպում: բ) Որ դաշնակցականները չէին կարող և չկարողացան վերստեղծել հայ պետականությունը, որ այդ կարող էին անել և արեցին հայ կոմունիստները, բերելով հայ ժողովրդի վերջնական փրկությունը: Այդ ցույց է տրված վեպում նավը Սևան հասցնելու գեղեցիկ սիմվոլով: Վեպի մնացած բոլոր թերությունների, ինչպես և հեղինակի բուրժուական մտածողության շատ արատավոր կողմերի մասին կարելի է խոսել, մեկնաբանել, քննադատել վեպի հրատարակության համար պատրաստվող հատուկ առաջաբանում: 10.03.62»:<sup>1</sup> Նշված «դրական» դրոյթները նույն պրն Գրիգորյանի խմբագրման «շնորհիվ» են տեղի ունեցել:

Երևանյան աղավաղված հրատարակությունը գրաքննիչների կարճատեսության արդյունք է: Գրքի խմբագիրը՝ Հր. Գրիգորյանը, սկզբում ճիշտ է կողմնորոշվել. «Նա (նկատի ունի վեպի անանուն գրախոսին) մոռացել է, որ գործ ունի բուրժուական գրողի հետ և մոտեցել է հեղինակի գործին այն չափանիշներով, ինչ կարելի է կիրառել միայն սովետական կամ սոցիալիստական ռեալիզմի ուղղության գրողների նկատմամբ»:<sup>2</sup> Բայց Գրիգորյանը՝ որպես կատարող (չնայած գրաված պաշտոններին ու բարձր դիրքին), չէր կարող կոտրել գրաքննության ընդունված կարծրատիպը: Կա այս գրաքննիչ-խմբագրի մեկ ուրիշ գրախոսականը ևս՝ «Կարծիք «Նավը լեռան վրա» վեպի մասին»:<sup>3</sup> Ահա այս «Կարծիքում» պրն Գրիգորյանը քարը քարի վրա չի թողնում և այնպիսի կեղտաջուր է լցնում վեպի վրա, որ կարելի է տարակուսել. եթե այդքան վատն է վեպը, ինչո՞ւ են ձեռնարկում խմբագրման և հրատարակման աշխատանքները. «Հեղինակը սիրում է իր ընթերցողներին ազգային սնապարծության կարկանդակներ

---

<sup>1</sup> Հայկազեան հայագիտական հանդես, Պեյրուֆ, 2006, (առանձնատիպ ԻԶ հատորէն), էջ 349:

<sup>2</sup> Հայկազեան հայագիտական հանդես, Պեյրուֆ, 2006 (առանձնատիպ ԻԶ հատորէն), «Մի քանի դիտողություններ Կ. Զարյանի «Նավը լեռան վրա» վեպի անանուն գրախոսականի կապակցությամբ» հոդվածից, էջ 329:

<sup>3</sup> Հայկազեան հայագիտական հանդես, Պեյրուֆ, 2006, (առանձնատիպ ԻԶ հատորէն):

իրամցնել:»<sup>1</sup>, «Վեպից միստիցիզմի գարշահոտություն է փչում:»<sup>2</sup>, ««Նավը լեռան վրա» վեպը գաղափարապես մեզ համար խորթ է, այն դաշնակցության տիրապետության արդարացումն է:»<sup>3</sup>

Ինչո՞ւ էր Կոստան Ջարյանի «Նավը լեռան վրա» վեպը այդքան կարևորում սովետահայ գրաքննադատությունը, ինչո՞ւ հենց այս գիրքը ընտրվեց խեղաթյուրելու համար:

Գրողի գեղարվեստական երեք գրքերը ներկայացնում են Հայաստանի համար բարդ ժամանակաշրջան, երբ կազմավորվում է Առաջին հանրապետությունը, դրան հաջորդում է խորհրդային կառավարությունը, ներկայացնում են բոլշևիկներին և բոլշևիկյան գաղափարախոսությունը, այդ գաղափարախոսության նկատմամբ ժողովրդի և հեղինակի վերաբերմունքը: «Նավը լեռան վրա» վեպում է այնքան լավ երևում Հայաստանի մենակությունն ու ողբերգությունը, «եղբայրական» ժողովուրդների գազանային վերաբերմունքը մեր նկատմամբ և մեր ժողովրդի կամքը, հոգու վեհությունն ու մաքրությունը: Ջարյանը շատ լավ գիտեր այդ իրականությունը, իսկ ընթերցողի սեղանին չկար ճշմարտությունն այդպես աղաղակող որևէ այլ գիրք: Եթե խորհրդային իշխանությունները կարողանային իրենց հետաքրքրող գիրքը հրատարակել փոխված գաղափարախոսությամբ, դա կնշանավորեր սովետական գաղափարախոսության հաղթանակը:

Այս հարցը հետաքրքրել է նաև Պ. Սնապանին. ««Նալը լեռան վրա» վեպին տրուեցաւ նախապատուութիւնը անոր համար, որ տարբեր հայութիւն մը ներկայացուած էր հոն, իրական հայութիւնը, կեանքը իր ձեռով ըմբռնող, ինքնուրոյն լինելութեան տէր վաղեմի ցեղին նոր դիմագիծը, անկախութեան տիրացած, անկախութեան սիրոյն ինքզինքը տասնապատկել գիտցող բուռն ոգին: Հայ մարդն էր այդ վեպը, մարդացած եւ անհատականացած հայ երկիրն էր, մեզ շրջապատող ժողովուրդներն ու վարդապետութիւնները մեր էութեան ու առաքելական ճակատագրին անհաղորդ ու խորթ հոշակող պատճառաբանուած խօսք էր, մշակոյթի փառաբանութիւն էր տակաւին, նոր որոնում, ծարաւ: Այս ամէնը եւ այս ամէնուն հետ Ջարեանը խորտակելու համար նախապատուութիւնը տրուեցաւ այս գործին: Ջարեանը իր զարեակաւնութեան մէջ խորտակելու համար: Բուն խնդիրը այս է: Ջարեանը

---

<sup>1</sup> Ն.տ., էջ 320:

<sup>2</sup> Ն.տ., էջ 322:

<sup>3</sup> Ն.տ., էջ 322:

մեռացնել իր զարեանականութեան մէջ: Եւ ասոր անունը համայնա-վարութիւն է: Համայնավար ոճ է ասոր անունը»:<sup>1</sup>

Զարյանին և նրա գիրքը «խորտակելու» ծրագիրը մշակվել էր 1961-62 թվականներին, համենայն դեպս «Նավի» վերաբերյալ առաջին ներքին գրախոսականները այդ թվականներին են գրվել:

Դեռևս 1961 թվականի հուլիսի 30-ին էր. Թոփչյանը<sup>2</sup> գրել էր իր կարծիքը Երևանում վեպը վերահրատարակելու կապակցությամբ՝ պահանջելով, վերանայել դաշնակցականների և բոլշևիկների նկատմամբ արտահայտված վերաբերմունքը, փոխել վեպում արտահայտված կարծիքը մայիսյան ապստամբության մասին, ինչպես նաև եղբայրական ժողովուրդների նկատմամբ հնչող «վիրավորական գնահատականը», որն անհարիր էր խորհրդային գաղափարախոսությանը<sup>3</sup>: «Մեր դիտողությունները չեն հանգում Կ. Զարյանին միանգամից սովետական գրող դարձնելու պահանջին, այլ վերաբերում են վեպի գաղափարական և գեղարվեստական հիմնական վերամշակմանը ճշմարիտ, ժողովրդական հայրենասիրության դիրքերից, իսկ այդ աշխատանքն անհրաժեշտ է կատարել, անհրաժեշտ է նախկին վեպն օժտել գաղափարական նոր բովանդակությամբ, փաստորեն ստեղծել նոր երկ, և այդ դեպքում միայն «Նավը լեռան վրա» վեպը արժանի կլինի հրատարակելու մեզ մոտ, Սովետական Հայաստանում»<sup>4</sup>:

Գրաքննիչների բազմաթիվ մեղադրանքներից մեկն էլ այն է, որ Կ.Զարյանը Հայաստանում չի եղել «Նավը լեռան վրա» վեպում նկարագրվող պատմական դեպքերի ժամանակ, ուստի նրա գրածը երևակայության արդյունք է և աղավաղում է պատմական ճշմարտությունը: Այստեղ տեղին է հիշել Վ.Մատթեոսյանի կարծիքը Զարյանի գրականության մասին. «Չենք ըսեր, թե Զարեան մարգարէ մըն էր իր գրականութեան մարգարէաշունչ շեշտով հանդերձ - այլ պարզապէս, իր ժամանակի զարգացումներուն շատ ուշիմ հետետորդ մը, թերեւս ամէնէն ուշադիրներէն՝ իր ժամանակակից հայ գրողներու շարքին»<sup>5</sup>:

---

<sup>1</sup> Պ. Սնայեան, Աագիսրած նալը, Պէյրութ, 1964, էջ 161:

<sup>2</sup> 1953-1954 թթ.՝ ՀՀ ԳԱ Գրականության ինստիտուտի տնօրէն: ՀԽՍՀ IV-VIII գումարումների Գերագույն սովետի դեպուտատ: 1967-1971 թթ.՝ ՀԽՍՀ Գերագույն սովետի նախագահ:

<sup>3</sup> Հայկազեան հայագիտական հանդէս, Պէյրութ, 2006 (առանձնատիպ ԻՁ հատորէն), էջ 311:

<sup>4</sup> Ն.ս., էջ 313:

<sup>5</sup> Վ. Մատթեոսեան, Կոստան Զարեանի շուրջ, էջ 389, Անթիլիաս-Լիբանան, 1998, տպ. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

1919 թվականի հուլիսին Ջարյանը՝ որպես իտալական մի քանի թերթերի հատուկ ներկայացուցիչ, գործուղվել է Կովկաս և առաջին անգամ եղել Հայաստանում: Նա հողվածներ է գրել Կ.Պոլսում տիրող մթնոլորտի մասին, Փոքր Ասիայում տիրող քաղաքական վիճակի, թուրքական զորքերի տեղաշարժերի, նույնիսկ Դենիկիների արշավանքի մասին: Այսինքն, նա շատ լավ ծանոթ էր Կովկասում տիրող քաղաքական վիճակին, և զարմանալի չէ, որ գրում է նաև քաղաքական-վերլուծական հողվածներ և «Նամակներ Կովկասից» ռեպորտաժների շարքը: Նա վերադառնում է Ֆլորենցիա՝ գրեթե մեկ տարի լինելով քաղաքական բարդ կյանքով ապրող Կովկասում և Հայաստանում:

1922-ին նա կրկին Հայաստանում էր, ուր կարողանում է ապրել մինչև 1924 թվականը: Դա բոլշևիկյան գաղափարախոսության կայացման և խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներն էին: Գրողը հրաշալի գիտեր այն իրականությունը, որը պիտի դարձներ իր վեպի նյութ: Ավելացնենք նաև, որ Կոստան Ջարյանը, մոտիկից ծանոթ լինելով Լենինին, երիտասարդության տարիներին տարված է եղել նրա գաղափարներով. «Լենինը, որի հետ ժընեուում աժան ճաշ էինք ուտում...»<sup>1</sup>: 1905-ին Ջարյանը մասնակցել է «Ռադուգա» ամսագրի հրատարակմանը. «Միխա Յխակայան եւ բժիշկ Սէմաշկոն մեզ առաջնորդում էին: Խումբ էինք կազմել եւ Բոգդանովի հետ էմպիրիո-կրիտիցիզմ էինք ուտումնասիրում, Կարլ Մարքսի մօրուքը Մախի փիլիսոփայութեան մէջ թաթախում»:<sup>2</sup>

Ժողովներ են արել, կարդացել Մարքսի, Էնգելսի, Կաուցկու բրոշյուրները: Ոգևորվել է Լենինի կերպարով. «Այդ փոքրիկ մարդու երեսին դաժան մի գաղափարի լոյսը կար: Նրա շուրջը ամէն ինչ լրջանում էր, ամէն ինչ վերին աստիճանի կարեւոր էր դառնում: Նրա մի նայածքը, մի խօսքը բաւական էր, որպէսզի մարդ նետուի կրակի մէջ»:<sup>3</sup>

Այդ ոգևորությունը և բոլշևիկյան գործունեությամբ տարվելը Կ.Ջարյանից խլում են նրա երիտասարդության մեկուկես տարիները, որոնք նա անցկացնում է Մյունխենի բանտում. «Միւնխենի բանտի տաժանելի օրերը եկան: Կախաղանի ուրականը: Ու մէկ ու կէս տարի յետոյ, վերջին տեսակցութիւնը Լենինի հետ Փարիզում, Avenue d'Orléans-ի մի փոքրիկ սրճարանում, վերջին ճաշը...»:<sup>4</sup>

<sup>1</sup> Կ. Ջարյան, Անցորդը եւ իր ճամբան, էջ 175:

<sup>2</sup> Ն.տ., էջ 176:

<sup>3</sup> Ն.տ., էջ 177:

<sup>4</sup> Ն.տ., էջ 177:



Գրաքննիչները անտեսել են վեպի առաջաբանի առաջին նախադասությունը. «Այս վեպը, բուն իմաստով՝ պատմական վեպ չէ, այլ պատմությունն է մի քանի հայ հոգիների, որոնց վիճակած էր ապրել մեր ազգային կեանքի ամենաբախտորոշ շրջաններից մեկում»:<sup>1</sup> Ճիշտ է, պատմությունը կա, պատմական դեպքերը կան, բայց հեղինակը կարևորում է պատմական հիմքի վրա կատարվող հոգեկան դեպքերը. «Առհասարակ «Նալը» լոկ գաղափարախօսական մեկնաբանութեան ենթարկուած է: Մոռացուած է Ջարեանի զգուշացումը, թէ «պատմութեան գիրք չէ»:<sup>2</sup>

Հրաչյա Գրիգորյանը վեպը խմբագրել է հուլիս-օգոստոս ամիսներին: Ջարյանի վիզայի ժամկետը լրանում էր օգոստոսին. նա մեկնել է Հայաստանից սեպտեմբերին: Գիրքը տպագրելու ժամկետը չխախտելու համար մեքենագրված վերջին օրինակը առանց նայելու հանձնել է տպագրության՝ պայմանով, որ հետո կնայի: Հրաչյա Գրիգորյանը գրում է. «Հեղինակի հետ բանավոր համաձայնության եկանք, որ եթե անհրաժեշտ լինի լրացուցիչ խմբագրական միջամտության (ոչ հիմնական, այլ փոքր կրճատումներ կամ ուղղումներ) ես այն կկատարեմ առանց իրեն տեղեկացնելու» (Կարծիք «Նավը լեռան վրա» վեպի մասին):<sup>3</sup>

Խմբագրված գրքի անվանաթերթի վրա նախապես եղել է «Վերամշակված հրատարակություն» ձեռագիր մակագրությունը: «Հետաքրքրութենէ զուրկ չէ, որ հոս արձանագրուած «վերամշակուած հրատարակութիւն» ենթավերնագիրը չքացած է երեանեան տպագիրէն: Ան կը յուշէ, որ Ջարեան փորձած է սկիզբէն իսկ պահել օրկանական կապը առաջին հրատարակութեան հետ՝ «մշակում» կամ «վերամշակում» ձեւին տակ: Ենթավերնագրին ջնջումը, իր հերթին, կը ցոլացնէ նախկինէն արմատապէս տարբեր, անոր հետ կապ չունեցող տպագրութեան մը յաւանականութիւնը»:<sup>4</sup> Վ. Մատթոսյանը նշում է նաև, որ Հր. Գրիգորյանը տեքստը երկու անգամ է խմբագրել, և այդ օրինակները խմբագրի մոտ պիտի պահպանված լինեն, բայց դրանց ճակատագիրը հայտնի չէ: «Յայտնի չէ նաեւ, թէ խմբագիր ու հեղինակ ինչպիսի փոխյարաբերութիւն մշակած են երկու ամիսներուն ընթացքին: Ըստ Թորոս Թորանեանի յուշագրութեան, Ջարեան ասած կ'ըլլայ, թէ

<sup>1</sup> Կ. Ջարյան, Նալը լեռան վրա, 1943, էջ 10:

<sup>2</sup> Վ. Մատթոսեան, Կոստան Ջարեանի շուրջ, էջ 375:

<sup>3</sup> Ն.տ., էջ 328:

<sup>4</sup> Հայկազեան հայագիտական հանդէս, Պեյրոս, 2006 (առանձնատիպ ԻԶ հատորէն), էջ 300:

«Հրաչեայ Գրիգորեանը եկել է ինձ մօտ, որ անի մի քանի անկարեւոր սրբագրութիւն: Համաձայնուել եմ: Ու յետոյ, առանց ինձ իրազեկ պահելու, կորցրել է չափը և իր ուզածի նման փոփոխութիւններ մտցրել: Մնացել եմ կատարուած իրողութեան առաջ (Թ. Թորանեանի «Գիրք Ռդիսականից»):<sup>1</sup>

Սովետական գրաքննությունը իրոք կարողացավ «Զարեանը մեռցնել իր զարեանականութեան մէջ». նրա շուրջ այնպիսի լռություն տիրեց, որը շարունակվեց նրա մահվանից հետո էլ: «Տասնամեակ բոլորեց Զարեանի մահուան վրայ, եւ իր մեծարժէք մեծագանգուած գրական վաստակին հանդէպ՝ քա՛ր լռութիւն: Իրեն նուիրուած ոչ մէկ ուսումնասիրութիւն, ոչ իսկ յարգանքի հանդէս մը կամ գրական ասուլիս մը: Սփիւռքի պարագան հասկանալի է եւ արդարանալի: Մանր գոհացումներով եւ կարծուկ դատումներով բաւարարուող գրական մեր առօրեային մէջ, քաջութիւն կը պահանջէ - նաեւ կարողութիւն, մօտենալու այն մեծ գանգուածին որ Զարեանի շրջանը գրականութիւնն է: ...Աւելի քան զարմանալի է Կոստան Զարեանի շուրջ այս անտարբերութիւնը, որ քիչ մը կը նմանի «լռութեամբ դաւադրելու» կերպի մը: Ի՞նչ է պատճառը: Մեզի համար դժուար է մեր հարցումին պատասխան փնտռել, որովհետեւ շատ փորփրելը լաւ տեղ չի տանիր»:<sup>2</sup>

Խորհրդային գրաքննիչներն ու գրաքննադատները կարողացան այնպիսի մթնոլորտ ստեղծել հայրենիք տեղափոխված գրողի շուրջ, նրա կերպարի մասին այնպիսի կարծիք ձևավորել, որի կարծրատիպը գրեթէ պահպանվում է մինչև այսօր. «Եթե իշխանությունները նրան նույնիսկ ապրելու և աշխատելու ամեն դյուրություն շնորհեին և օժտեին նյութական ամեն կարգի կարելիություններով, որոնք, սակայն, չկային, բավական էր «Նավը լեռան վրա» գեղեցիկ վեպի օրը ցերեկով խարդախումը, որ Կոստան Զարեանը ապրեր ծանր ողբերգություն, ստեղծագործողի դաժանագույն մի կյանք»:<sup>3</sup>

**Բանալի բառեր.** *գրականագետ, արժևորել, փառասիրություն, սիմվոլ, վերաստեղծել:*

---

<sup>1</sup> Ն.տ., էջ 301:

<sup>2</sup> Ա. Ծառուկեան, Մեծերը եւ միւսները, Պէյրոս, 1992, էջ 261-262:

<sup>3</sup> Վ. Առաքելյան, Կոստան Զարեանի հայրենադարձությունը, «Հայաստանի Հանրապետություն», 1994, 8 նոյեմբեր, էջ 6:

**Ереванское издание романа Костана заряна “Корабль ха горе”**

**Резюме**

Статья обращена к истории Ереванского издания романа 1963г. “Корабль на горе”.

Цель автора статьи – показать, что редактирование Ереванского издания выполнялось под воздействием советской идеологии, вопреки воле автора.

В результате этих редактирований, на стол советского армянского читателя ложилась книга, которая была только искаженным эхом оригинала.

*Hovhannisyan Anahit*

**Yerevan publication of the Novel “The Ship on the Mountain” by  
Kostan Zarian**

**Summary**

The article concerns to the novel "The Ship on the Mountain" by Kostan Zarian in 1963. The main purpose of the author of this article is to show that the editing in Yerevan of this publication has been made against the will of the author under the force of the Soviet ideology. As a result of this editing, the book was submitted to the readers only as a distorted echo of the original.